ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՊՍՏՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ.Քոյլոյանի՝ (լիազորագիր տրված՝ 04.05.2020թ.),

Հ.Ղազարյանի՝ (լիազորագիր տրված՝ 04.05.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6279-2020 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 16.04.2020թ. թիվ 72/153 գրության հիման վրա, 28.04.2020թ. թիվ 26/26-1/6279-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Պստո» ՍՊԸ-ին (հետայսու

նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պստո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Պստո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (հետայսու՝ Պատվիրատու) կարիքների համար՝ Երևան քաղաքի կանաչապատման համար 2020թ. անհրաժեշտ ծառերի, թփերի և ծաղիկների ձեռքբերման նպատակով 07.02.2020թ հայտարարվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Գնման ընթացակարգ):

Գնման ընթացակարգի թիվ 23, 47, 48, 49, 51, 54, 55 և 62 չափաբաժինների շրջանակում 17.03.2020 թվականին Պատվիրատուի և «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» պայմանագիրը 30.04.2020 թվականին նախաձեռնվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու թիվ ՍՑ-ՆԳ-2020/94 ընթացակարգ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. (…)

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով սահմանվում է նաև, որ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ

կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.

Կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի համաձայն՝

1. Մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխել կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) թույլատրվում է, եթե պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտել է պայմանագիրը (466 հոդվածի 2-րդ կետ):

2. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

1) մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

2) բազմիցս խախտվել են ապրանքների մատակարարման ժամկետները:

3. Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

1) բազմիցս խախտվել են ապրանքների համար վճարելու ժամկետները.

2) ապրանքները բազմիցս չեն ընտրվել:

4. Կողմերի համաձայնությամբ կարող են նախատեսվել մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխելու կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվելու այլ հիմքեր:

5. Մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ

նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Սույն իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են պարտադիր վավերապայմաններ, որոնք են մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Իսկ պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակվելուն հաջորդող օրը մասնակիցը համարվում է պատշաճ ծանուցված, որ պահից և համարվում է պայմանագիրը միակողմանի լուծված և հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Այսինքն՝ մասնակցի կողմից պետք է առկա լինի ինչպես պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման, այնպես էլ պայմանագրի միակողմանի լուծման հիմքերը, որպեսզի առկա լինի ոչ միայն մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, այլ ընդհանրապես նման ընթացակարգ սկսելու հիմքեր:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է արձանագրել ակնհայտը, որ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում հրապարակված չէ, որից ակնհայտ է այն փաստը, որ առկա չէ Ընկերության կողմից Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը ստանալու փաստ, որից բխում է, որ Ընկերությունը պատշաճ չի ծանուցվել Պայմանագրի միակողմանի լուծման մասին, ուստի Պայմանագիրը չի համարվում միակողմանի լուծված և առկա չէ նաև մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի հիմքեր:

Ինչ վերաբերում է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու Պատվիրատուի գրությամբ մատնանշված, այն փաստը, թե իբր Ընկերությունը 20.03.2020 թվականին ծանուցվել է 17.03.2020 թվականին Պատվիրատուի և «ՊՍՏՈ» ՍՊԸ միջև «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» պայմանագրին կից համաձայնագիրը կնքելու մասին, որը չի կնքել, հայտնում եմ, որ Պատվիրատուի կողմից փաստերը ներկայացված են խեղաթյուրված, իսկ գործողությունները կատարվել են ոչ իրավաչափ:

Մասնավորապես 20.03.2020 թվականին Պատվիրատուն՝ թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների՝ 7125600 (յոթ միլիոն հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի շրջանակներում կնքվելիք համաձայնագրի ծանուցմամբ , հայտնել է անհրաժեշտ է գնման ընթացակարգի շրջանակներում տուժանքի ձևով ներկայացված որկավորման և պայմանագրի ապահովումները փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով և համաձայնագրի հետ միասին նույն ծանուցումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՈԱԿ: Պատվիրատուի նշված պահանջը իրավաչափ չէ, հետևյալ հիմնավորումներով.

ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019 թվականի 597-Ա հրամանով հաստատվել է հրավերի օրինակելի ձևը, ըստ որի.

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից

համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:24

Ըստ հրավերի լրացման ուղեցույցի՝ 24 Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Այսինքն՝ նշվածից հետևում է , որ հրավերում պետք է նախատեսված լիներ, որ «Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները»

Ավելին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր

կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոհիշյալ իրավական նորմերից հետևում, որ Պատվիրատուի կողմից թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը չի լրացվել գործող օրենսդրության պահանջներին համապատասխան և չի նախատեսվել որևէ դրույթ որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երշխիքի կամ կանխիկ փողի տեսքով ներկայացնելու համար, ուստի նշված պահանջը իրավաչափ չէր, ավելին կողմերի միջև կնքված պայմանագրով Ընկերությունը նման պարտավորություն չի ստանձնել: Հայտնեմ նաև, որ որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երշխիքի կամ կանխիկ փողի տեսքով փոխարինելու օրենսդրական պահանջ նույնպես առկա չէ, քանզի եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով: Այսինքն տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ

փողով, եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, իսկ սույն դեպքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3.Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (…)

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ պարտապանը պարտավորության խախտման համար պատասխանատու է միայն մեղքի առկայության պարագայում, իսկ ինչ վերաբերում է սույն իրավիճակին, ապա հայտնում եմ, որ Պատվիրատուն 20.03.2020թ ծանուցմամբ հայտնել է, որ անհրաժեշտ է Գնման ընթացակարգի շրջանակում տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով և համաձայնագրի հետ միասին նույն ծանուցումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՈԱԿ, իսկ սույն ընթացակարգը նախաձեռնելու գրությամբ մատնանշել է միայն համաձայնագրի կնքման մասին: Սակայն, իրականում Պատվիրատուն ոչ իրավաչափ գործողություններով և պահանջներով Ընկերությունից պահանջել է Պայմանագրի շրջանակում կնքվելիք համաձայնագրի հետ միասին

ներկայացնել նաև որակավորման և պայմանագրի փոխարինված ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողով: ՈՒստի հակաօրինական պահանջն է հիմք հանդիսացել համաձայնագրի կնքված տարբերակը չներկայացնելու համար, քանզի Պատվիրատուն գործող օրենսդրության պահանջներին հակառակ պահանջել է համաձայնագրի հետ միասին ներկայացնել նաև որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողով, որի պարտավորություն Ընկերությունը չուներ և լրացուցիչ բեռը Ընկերության վրա դրվել է Պատվիրատուի հակաօրինական գործողությունների և վարքագծի արդյունքում:

Ամփոփելով հայտնեմ նաև, որ Ընկերության կողմից առարկություն առկա չէ, իսկ Պատվիրատուի կողմից առանց լրացուցիչ պահանջների կնքված համաձայնագրի ներկայացման ծանուցման դեպքում Ընկերությունը այն անմիջապես կներկայացնի»:

Ընկերության կողմից ներկայացվել է վերը շարադրված դիրքորոշման լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ կարող է նախաձեռնվել նաև այն դեպքում, երբ մասնակցի կողմից չի կնքվում պայմանագիր և նշված հիմքի առկայության դեպքում է

հնարավոր մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, որը պետք է կատարվի նման հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Գնման ընթացակարգի թիվ 23, 47, 48, 49, 51, 54, 55 և 62 չափաբաժինների շրջանակում 17.03.2020 թվականին Պատվիրատուի և «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), ուստի չի կարող խոսք լինել պայմանագիր չկնքելու մասին: Սույնով պայմանավորված Պատվիրատուի նախաձեռնությունը ակնհայտ անհիմն է, քանզի կողմերի միջև առկա է 17.03.2020 թվականին կնքված թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը, իսկ համաձայնագիրը պետք է կնքվեր ֆինանսկան միջոցների հատկացումից հետո, որը ինքնին պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու մասին է, այլ ոչ թե ինքնուրույն պայմանագիր է: Նշվածի տարանջատման դեպքում Պատվիրատուն հստակ կփաստեր, որ ընկերությունը պայմանագրի կնքումից չի հրաժարվել, իսկ քննարկումները եղել են պայմանագրում փոփոխություն կատարելու համաձայնագրի շուրջ, որն էլ իր հերթին ոչ թե չի կնքվել Ընկերության կողմից այլ եղել է Պատվիրատուի ոչ իրավաչափ պահանջների արդյունք: Մասնավորապես՝ 20.03.2020 թվականին Պատվիրատուն թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների՝ 7125600 (յոթ միլիոն հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի շրջանակներում կնքվելիք համաձայնագրի ծանուցմամբ, հայտնել է որ անհրաժեշտ է Գնման ընթացակարգի շրջանակում տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով և համաձայնագրի հետ միասին նույն ծանուցումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՈԱԿ: Պատվիրատուի նշված պահանջը ոչ իրավաչափությանը արդեն իսկ անդրադարձ կատարվել է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշմամբ:

Ամփոփելով հայտնեմ նաև, որ Ընկերության կողմից համաձայնագրի կնքման առարկություն երբևէ առկա չէ, իսկ Պատվիրատուի կողմից առանց լրացուցիչ պահանջների կնքված համաձայնագրի ներկայացման ծանուցման դեպքում Ընկերությունը այն անմիջապես կներկայացնի, ուստի բացակայում է Ընկերության մեղքը

համաձայնագրի չկնքման մեջ, և կրկին անգամ նշեմ այս պահին դեռևս առկա է կողմերի միջև կնքված և չլուծված պայմանագիր»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է մերժել «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

«Պստո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/94 ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2020թ. թիվ 72/153 գրությամբ հայտնել է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Պստո» ՍՊԸ-ի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 17.03.2020թ. կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» ծածկագրով գնման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմել է 54 705 600 ՀՀ դրամ: Հետագայում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 20.03.2020թ. «Պստո» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և համաձայնագրի նախագիծ՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, ինչպես նաև «Պստո» ՍՊԸ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները և ներկայացնել Պատվիրատուին: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացվել է, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու և նոր ապահովումները չներկայացնելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն կլուծվի՝ համաձայն Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:

Պատվիրատուն հայտնել է, որ «Պստո» ՍՊԸ-ի կողմից 10.04.2020թ. ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնում է, որ բանկը 28.04.2020թ. նոր միայն քննարկելու է բանկային երաշխիքի տրամադրման հարցը: Ինչը նշանակում է, որ դեռևս պարզ չէ՝ երաշխիք կտրամադրվի, թե՝ ոչ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատման համար 2020թ. անհրաժեշտ ծառերի, թփերի եվ ծաղիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի արդյունքում 17.03.2020թ. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Պստո» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» պայմանագիրը:

2. 20.03.2020թ. Պատվիրատուի կողմից «Պստո» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, ինչպես նաև «Պստո» ՍՊԸ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով և ներկայացնել Պատվիրատուին:

3. Ընկերության կողմից 10.04.2020թ. ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ վերջինս հայտնում է, որ թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման համար դիմել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին՝ բանկային երաշխիքներ տրամադրելու համար: Սակայն, հաշվի առնելով ներկայումս ՀՀ-

ում տիրող իրավիճակը, համաձայն բանկի կանոնակարգի՝ բանկային երաշխիքի տրամադրման հարցը քննարկվելու է 28.04.2020թ:

4. Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել 16.04.2020թ. թիվ 72/153 գրությամբ:

5. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 23.04.2020թ. թիվ 72/207 գրությամբ հայտնել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6279-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 16.04.2020թ. թիվ 72/153 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Պստո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատման համար 2020թ. անհրաժեշտ ծառերի, թփերի եվ ծաղիկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում 17.03.2020թ. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Պստո» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» պայմանագիրը:

20.03.2020թ. Պատվիրատուի կողմից «Պստո» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, ինչպես նաև «Պստո» ՍՊԸ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով և ներկայացնել Պատվիրատուին:

Ընկերության կողմից 10.04.2020թ. ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ վերջինս հայտնում է, որ թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման համար դիմել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ին բանկային երաշխիքներ տրամադրելու համար: Սակայն, հաշվի առնելով ներկայումս ՀՀ-ում տիրող իրավիճակը, համաձայն բանկի կանոնակարգի՝ բանկային երաշխիքի տրամադրման հարցը քննարկվելու է 28.04.2020թ:

Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել 16.04.2020թ. թիվ 72/153 գրությամբ:

Գործում առկա նյութերի համաձայն՝ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 23.04.2020թ. թիվ 72/207 գրությամբ հայտնել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>***, մինչդեռ՝

Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարությանը 16.04.2020թ, երբ դեռևս լուծված չի եղել կողմերի միջև կնքված թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագիրը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով լիազոր մարմնին ուղարկելու օրվա դրությամբ թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-4» գնման պայմանագիրը լուծված չի եղել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.04.2020թ. թիվ 26/26-1/6279-2020 գրությամբ «Պստո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**